ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 1620-Ա « 31 » մարտի 2026 թ.

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ԳՈՒՅՔԵՐԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 13-ԻՆ ԿԱՅԱՑԱԾ ՕՏԱՐՄԱՆ ԱՃՈՒՐԴԸ ՀԱՂԹՈՂՆԵՐԻՆ ԳՈՒՅՔԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ, ԳՈՒՅՔԵՐԻ ՕՏԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐ ԿՆՔԵԼՈՒ ԵՎ ԱՃՈՒՐԴԸ ՉՀԱՂԹԱԾ ԱՆՁԱՆՑ ՆԱԽԱՎՃԱՐՆԵՐԸ ՀԵՏ ՎԵՐԱԴԱՐՁՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով քաղաքացիական օրենսգրքի 463-րդ, 464-րդ հոդվածները, Երևան քաղաքի ավագանու 2025 թվականի դեկտեմբերի 23-ի հ.463-Ն, Երևանի քաղաքապետի 2018 թվականի դեկտեմբերի 26-ի հ.3757-Ա և 2026 թվականի փետրվարի 12-ի հ.795-Ա որոշումները, ինչպես նաև գույքի աճուրդով օտարման տրամադրելու մասին 2026 թվականի մարտի 13-ի նիստի արձանագրությունները.

1. 2026 թվականի մարտի 13-ին կայացած գույքի աճուրդային վաճառքի հաղթողներին տրամադրել գույքը՝ համաձայն սույն որոշման հ.1-62 հավելվածների:

2. Լիազորել Երևանի քաղաքապետարանի ֆինանսական վարչության պետին՝ 2026 թվականի մարտի 13-ին կայացած գույքի աճուրդային վաճառքի մասնակից, չհաղթած մասնակիցներին վերադարձնել Երևանի քաղաքապետարանի 900015211494 հ/հ մուծված նախավճարները՝ համաձայն սույն որոշման հ.63-րդ հավելվածի:

3. Լիազորել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչության պետին, աճուրդով գնված գույքերի վճարման ենթակա գումարների վճարումը սահմանված ժամկետում ու կարգով կատարելուց հետո, աճուրդում հաղթողների հետ կնքել գույքի օտարման պայմանագրեր:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչության ու մատակարարման և տեխնիկական սպասարկման վարչությունների պետերի վրա:

5. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Արմեն Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ